

ՀՈԴՎԱԾՆԵՐ

Վ.Լ. ԿՍՏՎԱԼՅԱՆ

ԳՈՅԱԿԱՆԻ ՀՈԳՆԱԿԻ ԹՎԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՅԱԶԵՏԻ ԲԱՐԲԱՌՈՒՄ

(համեմատությամբ պատմաաշխարհագրականորեն
մերձավոր բարբառների հետ)

Հայերենի բոլոր դրսևորումներում գոյականի հոգնակին կազմվում է սկզբնաձևին (եզակի թվին) ավելացնելով հոգնակերտ որևէ մասնիկ: Ինչպես շատ այլ բարբառներում, արևելահայ ու արևմտահայ գրական լեզուներում, այնպես էլ Բայազետի բարբառում հիմնական հոգնակերտներն են *-եր* և *-ներ* վերջավորությունները, որոնք ունեն իրենց գործառության որոշակի ոլորտները. որպես կանոն *-եր* հոգնակերտ ստանում են միավանկ, իսկ *-ներ* հոգնակերտ բազմավանկ բառերը. բան – բաներ, գիժ – գիժեր, գինդ – գընդեր, խաց (հաց) – խացեր, ծուռ (ծյուն) – ծըներ, ծէն (ծայն) – ծէներ, շուն – շըներ, ջուր – ջըրեր, վանք – վանքեր, բար – բարեր, բայց ախճիկ – ախճըկներ, ատամ – ադմըներ, դըմակ – դըմկըներ, գընդակ – գընդըկներ, յեղունգ – յեղընգներ, խէլօք – խէլօքներ, ծաղիկ – ծախկըներ, կատու – կադվըներ, հառու – հաուվըներ և այլն:

Բայազետի բարբառում ևս հին հայերենի բառավերջի *ն* հնչյունը կորցրած միավանկ բառերի հոգնակին կազմելիս այդ հնչյունը վերականգնվում է. ակ (անիվ) – ագներ, բեռ – բեռներ, գառ – գառներ, դուռ – դըռներ, յեզ – յեզներ, թոռ – թոռներ, խառս – խառսներ, ծուկ – ծըկներ, մուկ – մըկներ, մատ – մատներ: Այսպես նաև *ն* – ի հավելում են ունենում միավանկ *ծառ* և *ծուռ* բառերը՝ ծառներ, ճըռներ:

Եթե գրական հայերենում և շատ բարբառներում գաղտնավանկով ավարտվող բառերի հոգնակին ձևավորվում է – *եր* վերջավորությամբ, ապա Բայազետի բարբառում, ինչպես նաև Կարնո բարբառում², նման բառերը ստանում են *-ներ* հոգնակերտ. աստըղ – աստըղներ, վագըր – վագըրներ, մեղըր – մեղըրներ, բալըշ (բարձ) – բալըշներ, կիլօմետըր – կիլօմետըրներ, մետըր – մետըրներ:

Միավանկ արմատով ավարտվող բաղադրյալ բառերի հոգնակին, որպես կանոն, ձևավորվում է *-ներ* մասնիկով. ջըրխոր (ջրիոր) – ջըրխորներ, մօրքուր – մօրքուրներ, օրագիր – օրագըրներ, բայց կան նաև – *եր* վերջավորությամբ ձևեր. խաշքար (խաշքար) – խաշքարեր, փաստաթուխտ – փաստաթխտեր և այլն:

Այն բազմավանկ բառերը, որոնք ավարտվում են *ու*, *օ*, *օ*՝ ձայնավորներով, իրենց հոգնակին կազմում են *-ներ* մասնիկով. հառու – հաուվըներ, պուպու –

պուպուներ, բթու – բթուներ, կիւօ – կիւօներ, զալօ – զալօներ, վերո – վերոներ, աղէ – աղէներ, կուպէ – կուպէներ, պապէ – պապէներ:

Բայազետի բարբառում *ա, ան, ի* ձայնավորներով ավարտվող բազմավանկ բառերն իրենց հոգնակին կազմում են – *ք* մասնիկով. ազոա – ազոէք, գաթա – գաթէք, ճամփա – ճամփէք, դաստան – դաստանէք, գայլան – գայլանէք, թագան – թագանէք, կրսան – կրսանէք, մայլան – մայլանէք, շուշան – շուշանէք, սանտանան – սանտանանէք, փեսան – փեսանէք, թուլան – թուլանէք, գիհնի – գիհնիք, թըշնամի – թըշնամիք, խընամի – խընամիք, սիհնի – սիհնիք, քախկըցի – քախկըցիք, հերվընցի – հերվընցիք, սեվանցի – սեվանցիք:

Հայտնի է, որ բարբառներում – *ք* հոգնակերտից առաջ բառավերջի *ա* ձայնավորի վերածումը է – ի պատճառաբանվում է պատմական հնչյունափոխությանը, որին բաղաձայնից առաջ ենթարկվել է հինհայերենյան *այ* երկբարբառը: Բայց իրավացի է և Ս. Մուրադյանը, երբ մատնանշելով *ա < է* հնչյունափոխության առկայությունը նաև ուշ շրջանի փոխառություններում կամ նորակազմություններում, նշում է. «Այսպիսի բառերում *ա < է* հնչյունափոխության աղբյուրը ոչ թե գրաբարի *այ* երկբարբառի վերածումն է է պարզ ձայնավորի, այլ այդպիսի փոփոխության ենթարկված բառերի համաբանությունն է»²:

Բայազետի բարբառում գործառուում են նաև հոգնակերտ այլ մասնիկներ, որոնք, սակայն, ունեն շատ ավելի նեղ ընդգրկում: Այդ մասնիկներն են՝ *վանք, թանք, տանք/տիք, անք, ստանք, էրք*:

Վանք հոգնակերտ ստանում են մի շարք միավանկ բառեր, ընդ որում հետաքրքրական է, որ բոլոր այդ բառերում տեղի է ունենում է < ի հնչյունափոխություն. էծ – իծվանք, գլէ – գիլվանք, դէլ – դիլվանք, էշ – իշվանք, ծեր (ծայր) – ծիրվանք, տեր – տիրվանք:

Թանք հոգնակերտ մասնիկ ստանում են տեղ ցույց տվող մի շարք բառեր. գեղ (գյուղ) – գեղրանք, դէզ – դիզրանք, կող – կողրանք, տեղ – տեղրանք³, ըստե (այստեղ) – ըստերանք, ըտե (այդտեղ) – ըտերանք, ընդե (այնտեղ) – ընդերանք: Վերջին ձևերում արդեն եզակի թվում ընկած է *տեղ* բառի *ղ* բաղաձայնը: Ի դեպ, նման անկում Ալաշկերտի խոսվածքում նկատել է Բ. Մաղաթյանը, բայց միայն՝ հոգնակի թվում. տեղ – տէրանք⁴:

Տանք/տիք հոգնակերտ մասնիկ ստանում են ազգակցություն, մերձակցություն ցույց տվող գոյականներ. ախպեր (եղբայր) – ախպըրտանք, քուր (քույր) – քըվըրտանք, հընգեր – հընգերտանք, խօրօխպեր (հորեղբայր) – խօրօխպըրտանք, տէբըր – տէբըրտանք: Այս բառերից բացի՝ *տանք* հոգնակերտ ստանում է նաև *կըտոր* բառը՝ *կըտորտանք*:

Անք հոգնակերտ ստանում է *ծի* բառը՝ *ծիյանք*: *Ստանք* հոգնակերտ է ստանում *գ տիհն* բառը՝ *գ տըստանք* (ին հնչյունախմբի անկումով), իսկ *էրք* մասնիկ՝ *տըղա* բառը՝ *տըղէրք*:

Մանթ (մարդ) բառը իր բուն իմաստով կիրառության դեպքում ստանում է *իք* հոգնակերտ՝ *մանթիք* (օր.՝ էղ մանթիք քե ի՞նչ արած. *Մանթիք* հառըվտընէ չուր հիրկուն աշխատում են, էլի մէ լավ օրի չեն), իսկ երբ ունենում է «ամուսին» կամ «տղամարդ» իմաստները, ստանում է *եր* մասնիկ՝ *մանթեր* (օր.՝ *Գեղի կընգըները հիրանց մանթերին լիզու չեն տալում. Կընանիք նըստած, մանթերը կայնած*):

Կին բառի դիմաց ունենք *կընհկ* ձևը, որի հոգնակին է *կընգըներ*, գործածական է նաև *կընանիք* ձևը, որը, սակայն, բարբառունս չունի իր եզակին:

Բայազետի բարբառում հավաքական հոգնակերտ մասնիկներից գործածական են հետևյալները՝ *անք, ենք, ոնք*:

Անք հոգնակերտ ստանում են խնամիական հարաբերություն արտահայտող բառերը. *աներ* – *աներանք*, *կտար* – *կտարանք*, *խր* – *խտրանք*: Այս հոգնակերտով ունենք գերդաստան ներկայացնող մեկ ձև՝ *Տրդդերանք*:

Ենք հոգնակերտի հավելումով հատուկ ամծնանունները, վերածվելով անեզական գոյականների, նշանակում են տվյալ անձը ներառող մարդկանց խումբ (Վառթան – *Վառթանենք*, Կարո – *Կարոյենք*, Աստղիկ – *Աստղիկենք*, Նուն – *Նունյենք*): Այս հոգնակերտով ունենք նաև գերդաստան անվանող անեզական հոգնակիներ (Ափրանենք, Նիկոխեսենք, Գափոյենք, Դարիճենք, Դոնոյենք, Ֆրթոյենք, Կիրանկոսենք, Կրոյոյենք):

Ոնք հոգնակերտ ստանում են *խնր, քոնր, մերը, ձերը, էսի, տսի, էնի* դերանունները՝ *խոնր, քոնոնր, մերոնք, ձերոնք, ըստոնք, ըտոնք, ընդոնք*: Ընդ որում սրանք սովորական հոգնակիներ են և ոչ թե անեզականներ: Այսինքն՝ եթե *խնր* եզակին նշանակում է «խն ունեցած մեկ առարկան», ապա *խոնր* հոգնակին նշանակում է «խն ունեցած մեկից ավել առարկաները», *էսի* եզակին մատնացույց է անում մեկ առարկա, իսկ *ըստոնք* հոգնակին մատնացույց է անում մեկից ավելի առարկաներ: Ի տարբերություն այս ձևերի՝ *քեռի* և *խընամի* բառերով ձևավորված *քեռոնք, խընամոնք* հոգնակիները հավաքական իմաստ ունեցող անեզական են, իսկ *քեռի* և *խընամի* բառերի սովորական հոգնակիներն են *քեռիք, խընամիք*: *Ոնք* հոգնակերտով ձևավորվում են նաև գերդաստան անվանող անեզականներ՝ *Գարգըռցոնք, Կաղվալոնք, Չիչոնք, Մուխսոնք, Վանեցոնք, Շանոնք, Առգաքանցոնք, Խըզմալոնք, Կարնախոնք*:

Այսպիսով, եթե *անք* և *ենք* հոգնակերտներով ձևավորվում են միայն անեզական հոգնակիներ, ապա *ոնք* հոգնակերտով ձևավորվում են ինչպես սովորական, այնպես էլ անեզական հոգնակիներ:

Չետաքրքրական է, որ անեզական գոյականների մեջ գերդաստան ներկայացնողներն առանձնանում են ինչպես իմաստով, այնպես էլ քերականական յուրահատկությամբ՝ այդպիսով ձևավորելով գոյականների քերականական – իմաստային յուրահատուկ խումբ: Այսպես, եթե անձ և նրա շրջապատ ցույց տվող հոգնակիներում խումբն անվանվում է իր անդամներից մեկով, և նույն հաջողությամբ այդ խումբը կարող է անվանվել նաև մեկ այլ անդամի անունով (օրինակ՝ մարդկանց խումբը, որի մեջ են Չայկը և Արամը, նույն հաջողությամբ կարող է անվանվել ինչպես Չայկենք, այնպես էլ Արամենք), ապա որևէ գերդաստան ներկայացնող անեզականը անվանում է մարդկանց խումբ, որոնց բոլորին է հավասարապես վերաբերում և գոյություն ունի կոնկրետ իրադրությունից դուրս, այսինքն՝ գերդաստանի անունը օբյեկտիվ իրողություն է: Մինչդեռ անդամի անունով ձևավորված խմբանունը իրադրական է և յուրաքանչյուր կոնկրետ դեպքում ընդգծում է այս կամ այն անձի մենակ չլինելը: Գերդաստանի անունների քերականական յուրահատկությունը Բայազետի բարբառում այն է, որ նրանք սեռական հոլովով ունեն եզակի համարժեքներ՝

դարձյալ հավաքական իմաստով և առանց իմաստային որևէ նրբերանգի. այսպես՝ Նիկոխսենք – Նիկոխսենց երօ կամ Նիկոխսի երօ, Կըռօյենք – Կըռօյենց Արմայիս կամ Կըռօյ Արմայիս, Չիչոնք – Չիչոնց Արբօ կամ Չիչու Արբօ:

Եզակի և հոգնակի այս զուգահեռների փոխկապակցվածությունն ունի հետաքրքրական դրսևորում. եթե գերդաստանի անվանումը ունի *ենք* հոգնակերտ, ապա սեռականում նրա եզակի զուգահեռը ունի *ի* վերջավորություն. *Ափրամենք* – Ափրամենց, *Ափրամի*, *Դարփընենք* – Դարփընենց, *Դարփընի*, *Կիրակոսենք* – Կիրակոսենց, *Կիրակոսի*. Իսկ եթե գերդաստանի անվանումը ունի *ոնք* հոգնակերտ, ապա սեռականում նրա եզակի զուգահեռը ունի *ու* վերջավորություն. *Կաղվալոնք* – Կաղվալոնց, *Կաղվալու*, *Չիչոնք* – Չիչոնց, *Չիչու*, *Մուխսոնք* – Մուխսոնց, *Մուխսու*, *Վանեցոնք* – Վանեցոնց, *Վանեցու*, *Շանոնք* – Շանոնց, *Շանու*, *Առզաքանցոնք* – Առզաքանցոնց, *Առզաքանցու*, *Խըզմալոնք* – Խըզմալոնց, *Խըզմալու* և այլն:

Նշենք, որ գերդաստանի եզակի անվանումը դրսևորվում է միայն սեռական հոլովով և միշտ հատուկ անձնանվան հատկացուցիչ է (Հօվանի Գըվօ, Չանքոյ Միշա, Թօրօյ Մէլքօ, Հունանի Վալօղ, Դարփընի Գըրիշ, Չիչու Մըխօ, Կաղվալու Արթօժ, Խըզմալու Գէվօ), մինչդեռ հոգնակի անվանումը դրսևորվում է բոլոր հոլովներով և նախադասության մեջ ունենում է տարբեր դերեր. Դեղօյենք յետ են գըլխի հընգընում. Դեղօյենց տըները վիրեվն են. Հընչէ՞ս կըպե Դեղօյենցը, չես պըռծնում. Դեղօյենցը կանմէջ անրած, նըստած. Դեղօյենցից վընաշ չըկա. Հիրանց Դեղօյենցօվ շնտ ա խըպառտումն:

Դիտարկումները ցույց են տալիս, որ Բայազետի բարբառում (ինչպես նաև այլ բարբառներում) հոգնակերտները ծագումնային առումով հիմնականում բացատրելի են: Այսպես, հասկանալի է, որ *ք* մասնիկը հին հայերենի ընդհանուր հոգնակերտն է, որի առանձին գործածությունը թեև բարբառներում ավելի սահմանափակ է, բայց այն հանդես է գալիս բոլոր բաղադրյալ հոգնակերտների կազմում. *վանք*, *րանք*, *տանք/տիք*, *անք* (սովորական հոգնակերտ), *ստանք*, *երք*, *անք* (հավաքական հոգնակերտ), *ենք*, *ոնք*: Վերջին երեք ձևայնությունը *ք* մասնիկի առանձնակի գոյությունն արտահայտվում է նաև քերականորեն. այդ հոգնակերտներն ունեցող բառերի թեք հոլովներում տեղի է ունենում *ք < g* հեթեթագայություն. այսպես՝ Տըրդէրանք – Տըրդէրանց – Տըրդէրանցից, Հունանենք – Հունանենց – Հունանենցից, Մուխսոնք – Մուխսոնց – Մուխսոնցից, քեռոնք – քեռոնց – քեռոնցից: Ընդհանրապես՝ արդի հայերենում *g* հոլովումը արծագանքն է զրաբարյան քերականական այն իրողության, որ հոգնակի ուղղականի *ք* հոլովակերտը սեռականում փոխարինվում էր *g* հոլովակերտով:

Ուսումնասիրողները (Ա. Այտընյան, Ա. Բագրատունի և ուրիշներ) զրաբարյան ընդհանուր *ք* հոգնակերտին զուգահեռ արծանագրել են հին հայերենի մի շարք այլ հոգնակերտների գործածությունը: Օրինակ Ա. Աբրահամյանը նշում է, որ հոգնակիությունն արտահայտվում էր նաև այլ մասնիկների միջոցով, ինչպիսին են՝ *ական*, *ան*, *անի*, *եան*, *եար*, *նեար*, *որեայ* կամ *որայ*, *տի* կամ *ոտի*²:

Այնհայտ է, որ աշխարհաբարի *եր* և *ներ* հոգնակերտները հինհայերենյան *եար* և *նեար* մասնիկների հետագա զարգացումն են ներկայացնում: Ի դեպ, հին հայերենից բերվող օրինակներում *եար* հոգնակերտ ունեն միավանկ բա-

ները (բանեար, վանեար, վարժեար), իսկ *ճեար* հոգնակերտ՝ բազմավանկ բաները (բարձիկ – բարձկնեար, նաւակ – նաւկնեար):

Անք հոգնակերտ (առանց հավաքականության իմաստի) Բայազետի բարբառում ունենում է միայն *ծի բառը՝ ծիյանք*: Այստեղ ակնհայտ է հին հայերենի *ան* մասնիկի առկայությունը, որը գրաբարի քերականները արձանագրել են *իշան*, *ծիան* ձևերում: Պարզ է, որ *ք* – ն հետագա հավելում է, և քերականներն այդ հավելումը *իշանք* ձևում դիտարկել են դեռևս գրաբարյան շրջանում⁷:

Այս հոգնակերտին սերտորեն առնչվում է *վանք* հոգնակերտը, որը Բայազետի բարբառում, ինչպես տեսանք, ստանում են այն միավանկ բառերը, որոնցում տեղի է ունենում է < ի հնչյունափոխություն. էծ – իծվանք, գէլ – գիլվանք, դէլ – դիլվանք, էշ – իշվանք, ծեր (ծայր) – ծիրվանք, տեր – տիրվանք: Ըստ Յր. Աճառյանի⁸ *վանք* հոգնակերտում *վ* տարրը ներկայացնում է *վի* հոգնակերտ մասնիկը⁹: Այդպես է կարծում նաև Գ.Տահուկյանը¹⁰: Սակայն այդ մոտեցումը մեզ անհամոզիչ է թվում: Հայտնի է, որ բարբառներում *վի* մասնիկը գործածվում է մարմնի զույգ անդամներ ցույց տալու համար, այսինքն՝ ունի երկակիության իմաստ¹¹: Այդ իմաստը բացարձակապես որևէ առնչություն չունի բերված հոգնակիների հետ: Բացի այդ, Բայազետի և պատմաաշխարհագրականորեն նրան մերձավոր հույի, Դիադիմի և Արարատյան բարբառներում երկակիության իմաստի և *վի* մասնիկի որևէ հետք չկա: Վանի բարբառում այդ հետքը կա *վեր* հոգնակերտում, որով իրենց հոգնակին կազմում են մարմնի մասերի մի շարք անուններ՝ ճեղվեր (ջղեր), ընքվեր (ունքեր), ճայվեր (ճանկեր), հընթվեր (անութներ) և այլն¹²: Մշո բարբառը թեև ունի երկակիության իմաստի դրսևորում *վի* մասնիկի միջոցով¹³, սակայն այս բարբառի Ալաշկերտի խոսվածքին, որը սահմանակից է Բայազետի բարբառին, երևույթը անծանոթ է: Հետևում է, որ *վանք* հոգնակերտի կազմում *վ* տարրը կարող է այլ ծագում ունենալ: Նախ նշենք, որ ինչպես Բայազետի, այնպես էլ այլ բարբառներում հոգնակի ուղղականը առանձին դեպքերում կարող է կազմվել ոչ թե եզակի ուղղականից, այլ եզակի սեռականից: Օրինակ Բայազետի բարբառում *հառու*, *լիզու*, *կանտու* բառերի եզակի սեռականի ձևերն են *հառվի*, *լիզվի*, *կանդվի* (սրանցում ծայնավորից առաջ տեղի է ունեցել ու < վ հնչյունափոխություն), իսկ հոգնակիի ձևերն են *հառվքներ*, *լիզվքներ*, *կանդվքներ*: Ուսումնասիրողներն այս իրողությունը դիտարկել են նաև Վանի, հույի, Արարատյան բարբառներում՝ առանց կապ տեսնելու եզակի սեռականի և հոգնակի ուղղականի միջև: Հ.Աճառյանը, երևույթը դիտարկելով Վանի բարբառում, գտնում է, որ *լեզվքներ*, *կատվքներ* և նման ձևերում *ներ* մասնիկը եզակիին կապվում է *վը* – ով¹⁴: Անընդունելի է նաև երևույթին Յր. Աճառյանի տված բացատրությունը Նոր Զուղայի բարբառի առնչությամբ. «*Ու վերջացող բազմավանկ բառերը, բացի սովորական ք ձևով հոգնակիից, ունենում են նաև մի երկրորդ ձևի հոգնակի, որ կազմվում է –ընէր մասնիկով և որի առաջ եզակիի ու ծայնավորը դառնում է վ. օր. առու > առու, առուք, առվքներ...*»¹⁴:

Այս կարգի ձևերին հույի բարբառում անդրադառնալով՝ Մ. Ասատրյանը գրում է, որ բառավերջի *ու* – ն փոխվում է «*վ* – ի, որ *ներ* մասնիկի հետ կապվում է *ը* – ով, ինչպես՝ լեզու – լեզվքներ»¹⁵: Իր «Շատախի բարբառը» աշխատության մեջ Մ. Հ. Մուրադյանը գրում է. « – ու ծայնավորով վերջացող գոյա-

կանները հոգնակին կազմում են *-ներ* մասնիկով, ըստ որում բառավերջի *ու -ն*, ընկնելով գաղտնավանկ *ը -ից* առաջ, հնչյունափոխվում է *վ -ի*։ Օրինակ՝ լեզու - լեզվներ, առու - առվներ, կատու - կատվներ¹⁶։ Իհարկե, նման մեկաբանությունը անընդունելի է, որովհետև անհասկանալի է մնում, թե *ու* ծայրավորով ավարտվող բառի և *ներ* հոգնակերտի միջև որտեղից և ինչու է հանդես գալիս «գաղտնավանկ ը»։ Անորոշ ու անհամոզիչ այս բացատրությունների փոխարեն, կարծում ենք, ճիշտ կլինի պնդել, որ բարբառներում *ու* հնչյունով ավարտվող բառերի հոգնակի ուղղակաճը ձևավորվում է եզակի սեռակաճից, որտեղ էլ տեղի է ունենում *ու < վ* հնչյունափոխություն *ի* մասնիկից առաջ։

Որ հոգնակի ուղղակաճը կարող է կազմվել եզակի սեռակաճից, վկայում է նաև Բայազետի բարբառի *քըվորտանք* հոգնակին, որտեղ *տանք* հոգնակերտից առաջ ունենք եզակի սեռակաճի *քըվոր* (քուր - քըվոր) ձևը¹⁷։ Նշանակում է՝ *իծվանք, գիլվանք, դիլվանք, իշվանք, ծիրվանք, տիրվանք* հոգնակիները կարող են ձևավորված լինել ոչ թե եզակի ուղղակաճից, այլ եզակի սեռակաճից։ Այս տեսակետը պնդելու համար հիմք կարող է ծառայել բերված հոգնակիներում առկա է < ի հերթագայությունը, որը հայերենում, որպես կանոն, դրսևորվում է հոլովման, բառաբարդման ու ածանցման, բայակազմության ժամանակ. օրինակ՝ էշ < իշոյ, մեջ < միջոց, հանդես < հանդիսի, սեր < սիրել (գրբ.), տեր < տիրոջ, տիրել, տիրակալ, էշ < իշաբեռ, էջ < իջնել (աշխ.), էշ < իշու կամ իշի, կես < կիսար, էծ < իծարած, գէլ < գիլակեր (բրբ.) և այլն։ Թե արդի գրական հայերենում, թե բարբառներում եզակի ուղղակաճից հոգնակի ուղղակաճն ձևավորելու դեպքում է < ի հնչյունափոխություն տեղի չի ունենում. օրինակ՝ վեճ < վեճեր, կես < կեսերին, տեր < տերեր (գրկ.), դէգ < դէգեր, գէլ < գէլեր, ծեր < ծերեր (Բայազետի բարբառ, Ալաշկերտի խոսվածք)։ Չետևում է, որ *իծվանք, գիլվանք* տիպի հոգնակիները եզակի ուղղակաճից չէ, որ կազմվում են։ Մնում է պնդել, որ *անք* հոգնակերտից առաջ *վ* մասնիկը եզակի սեռակաճի *ու* վերջավորությունից է առաջացել հնչյունափոխական հայտնի օրինաչափությամբ։ Եթե այդպես է, ուրեմն պիտի ունենանք եզակի սեռակաճի *իծու, գիլու, դիլու, իշու, ծիրու, տիրու* բարբառային ձևեր։ Բայազետի բարբառում նշված բառերից ոչ մեկը *ու* հոլովման չի ենթարկվում, հանդիպում է միայն *տիրու* ձևը, այն էլ՝ նախաստական արտահայտություններում ու հայտնյաճներում։ Սակայն պետք է հիշել, որ գրաբարում էշ բառը ենթարկվում էր *ո* վերջադրական հոլովման՝ *իշոյ*, իսկ գրաբարյան *ո* հոլովման դիմաց արդի հայերենում ունենք *ու* հոլովում։ Բացի այդ, գրաբարում թռչուն և կենդանի անվանող բառերը հիմնականում ենթարկվում էին *ու* հոլովման. արդի մի շարք բարբառներ, դրանց թվում՝ Բայազետի բարբառին մերձավոր Վանի, Խոյի, Դիադինի, Աշո բարբառները, Ալաշկերտի խոսվածքը, այս առումով նմանվում են գրաբարին։ Դիտարկումները ցույց են տալիս, որ նշված բարբառներում հանդես են գալիս սեռակաճի հիշյալ գրեթե բոլոր ձևերն էլ. այսպես՝ էծու, կյիլու, իշու, տիրու (Վան), էծի, կյելի, էշի, տիրու (Խոյ), իծու, գիլու (Դիադին), գիլու, իծու, դիլու (Մուշ)։ Այս բարբառներում եզակի սեռակաճից ձևավորված պետք է համարել ուսումնասիրողների կողմից նշվող հետևյալ հոգնակիները. Վանի բարբառ՝ էշ - իշու - իշվանք, տեր - տիրու - տիրվանք, Դիադինի բարբառ՝ էշ - իշու - իշվանք, էծ - իծու - իծվանք, Ալաշկերտի խոսվածք՝ էծ - իծու

– իծվան, էշ – իշու – իշվան, գեթ – գիծու – գիծվան, ճեղ – ճիղու – ճիղվան, Սշո բարբառ՝ էշ – իշու – իշվանք, էծ – իծու – իծվանք:

Ինչ վերաբերում է Բայազետի բարբառին, ապա ենթադրում ենք, որ այստեղ ևս հիշյալ բառերը նախապես ենթարկվել են *ու* հոլովման և եզակի սեռականի վրա ստանալով *անք* հոգնակերտ՝ օրինաչափորեն հոգնակիում ունեցել են *վանք* խմբով ավարտվող ձևեր, բայց ժամանակի ընթացքում անցել են *ի* հոլովման, ինչին նպաստել են թե Արարատյան բարբառի ազդեցությունը (այստեղ կենդանիների և թռչունների անունների՝ *ու* հոլովման ենթարկվելու հինհայերենյան օրինաչափության հետքեր չկան), թե *ի* հոլովման՝ իր ընդգրկման ոլորտը շարունակ ընդլայնելու միտումը: Մինչդեռ հոգնակիի նախնական ձևերը պահպանվել են:

Կրկին անդրադառնալով *ծիյանք* հոգնակիին՝ նշենք, որ Բայազետի բարբառում *ծի* բառը ենթարկվում է *ան* հոլովման, ուստի նրա հոգնակիում *վ* տարր որևէ կերպ լինել չէր կարող:

Ասվածից կարելի է եզրակացնել, որ Բայազետի բարբառում ծագումնաբանորեն *ծի*, *էշ*, *էծ*, *գէլ*, *ղէլ*, *ծեր*, *տէր* բառերի հոգնակերտ մասնիկն է *անք*, սակայն *էշ*, *էծ*, *գէլ*, *ղէլ*, *ծեր*, *տէր* բառերի՝ այլևս *ու* հոլովման չենթարկվելու պարզապես այդ բառերի հոգնակերտ պետք է համարել *վանք* մասնիկը:

Րանք հոգնակերտի վերաբերյալ Գր.Աճառյանը կարծիք է հայտնել, որ այն կազմված է *–եր* և *–անք* (*ան – ք*) մասնիկներից: Ինչպես տեսանք, Բայազետի բարբառից պես, մերձավոր բարբառներում ևս *րանք* հոգնակերտ ստանում են տեղ ցույց տվող բառեր. այսպես՝ գեղրանք, ըստղրանք, տեղրանք, կողրանք (Ար. բրբ.), տեղրանք, դեխրանք (դեհ < դեխ), կյեղրանք (գյուղեր), կողրանք (Վանի բրբ.), տեղրանք, կյեղրանք (գյուղեր), կողրանք (Խոյ–Մրդ. բրբ.), տեխրանք (տեղեր), դիզրանք (դեզեր), գեղրանք (Սշո բրբ.), տեղրանք, դեխրանք, գեղրանք, կողրանք (Դիաղինի բրբ.): Ալաշկերտի խոսվածքում նույն այս բառերի հոգնակին ձևավորվում է *րան* մասնիկով՝ դիզրան, գեղրան, կողրան, տեղրան (տեղեր):

Տեղ մատնանշող մի շարք բառեր հայ մատենագրության մեջ վկայված են նաև *որայ* կամ *որայք* հոգնակերտով՝ արտորայք, դաշտորայք, գիւղորայք, վանորայ կամ վանորայք: Կարծում ենք՝ կարելի է ենթադրել, որ բարբառային *րանք* հոգնակերտը հինհայերենյան *որայ* (նաև՝ *որայք*) հոգնակերտի հնչյունափոխական զարգացման արդյունք է՝ *ո* – *ի* սղմամբ և *անք* հոգնակերտի համաբանական ազդեցությամբ կատարված *յ < ն* հնչյունափոխությամբ: Այս ենթադրությունը պնդելու համար կարևոր փաստարկ է բարբառներում նաև *օրանք* հոգնակերտի առկայությունը. այսպես՝ Արարատյան բարբառի Լոռու խոսվածքում տեղ ցույց տվող դերանունները հոգնակին կազմում են հետևյալ կերպ.

այստեղ>ըստեղ||ըստի – ըստեղօրանք||ըստիօրանք,

այդտեղ>ըտեղ||ըտի – ըտեղօրանք||ըտիօրանք,

այնտեղ>ընդդ||ընդի – ընդդօրանք||ընդիօրանք¹⁹:

Տանք կամ *տիք* մասնիկներով²⁰ հոգնակիները, ինչպես տեսանք, արտահայտում են ազգակցական, ընտանեկան կամ խմբային հարաբերություն: Այդպես է նաև Սշո, Դիաղինի բարբառներում, Ալաշկերտի և Լոռու խոսվածքնե-

րում, որոնցում դրսևորվում են նաև այս մասնիկների հնչյունափոխված տարբերակներ (*դիք, դիկ, դանք, տինք*) այսպես՝ տեքըրդիք, ախալըրդիք, հոխալըրդիք (հորեղբայրներ), մորքըրդիք, հորքըրդիք, կընգըրդիք, տալվըրդիք, հընգըրդանք, հընգըրդիք, տիրվըրդանք, տիրվըրդիք (Մշո բրբ.), քուրվըրտիք՝ կընգըրտիք՝ տեքըրտիք՝ խընամտիք՝ (Դիադիմի բրբ.), քավորդիկ, սաներդիկ, սանամըրդիկ, հոխալըրդիկ, հընգըրդիկ, քուրվըրդիկ (Աշխ խոսվ.), աներտիք, հընգըրտիք, հըրոխալըրտիք, հըրեյըրտիք, տեյըրտիք, քըվորտիք, ախալըրտիք (Լոռու խոսվ.): Արարատյան բարբառի առանձին խոսվածքներում *տինք* կամ *տանք* մասնիկներով հոգնակի կազմում են մի երկու բառ՝ ախալըրտիք, ընգըրտիք, ախալըրտանք, ընգըրտանք, կտորտանք, գոմէշտանք: Այս օրինակներում, ինչպես տեսնում ենք, բացակայում է բառերի իմաստային ընդհանրությունը: Այն առավել ևս բացակայում է Վանի և Խոյ-Մարաղայի բարբառներում հանդիպող օրինակներում. տանիք > տանիս, տանըստանք, չէտ – չէտըստանք, գոմէշ > գյտոմէշ, գյտոմըշտանք, բոնիր > բոներ, բորվըրտանք, կնքաւոր > քյավոր, քյավորտանք (Վանի բրբ.), գոմէշ > գյամէշ – գյամըշտանք, գետին > կյետին – կյետընտանք, եղբայր > ախալըր – ախալըրտանք, կըտոր – կըտորտանք, տանիք > տընիս – տընըստանք (Խոյ-Մրղ. բրբ.):

Բայագետի բարբառում *տանք* կամ *տիք* հոգնակերտ ունեցող բառերը ազգակցություն հետ միասին արտահայտում են նաև հավաքականության իմաստ, այսպես՝ *ախալըրտանք* ձևը անվանում է բոլոր եղբայրներին, բայց ոչ նրանց մի մասին. օրինակ՝ Ընդու ախալըրտանքը քաղաքն են անբում. էրկու ախալըր անշխատում են, իրեք ախալըր խօսպան են էրում:

Տանք կամ *տիք* հոգնակերտները ակնհայտորեն բաղադրված են հինհայերենյան – *տի* մասնիկով, որի վրա իբրև կրկնակի հոգնակերտ ավելացել է *ք* կամ *անք*: Ի դեպ, գրաբարում ևս –*տի* մասնիկով հոգնակիները ունեին հավաքական իմաստ, ինչպես՝ մանկտի, ծակտի, ոսկրտի, փորտտի, սնոտի, մեռելտի²⁰:

Ստանք հոգնակերտ Բայագետի բարբառում ստանում է միայն *գետին* բառը՝ *գետըստանք*: Մերձավոր որևէ բարբառ այս հոգնակերտի կանոնավոր գործածություն չունի: Սակայն Մշո բարբառում գործածական է *ստան* հոգնակերտը, որն ստանում են *ի* և *ա* ձայնավորներով ավարտվող բառեր. գ'արի – գ'արեստան, գ'ինի – գ'ինեստան, օսկի – օսկեստան, տարի – տարեստան, էրեխա – էրեխեստան, քեռի – քեռեստան, փեսա – փեսեստան, քավա – քավեստան: Մշո բարբառի Ալաշկերտի խոսվածքում *ստան* մասնիկով մեկ հոգնակի կա՝ գեդին – գեղըստան, որն էլ, կարծում ենք, ներթափանցել է Բայագետի բարբառ՝ այստեղ լրացվելով *ք* մասնիկով: Վանի և Խոյ-Մարաղայի բարբառներից ուսումնասիրողների բերած օրինակներում ավելի տարածված է *ստանք* հոգնակերտի արժեքն ունեցող տանք մասնիկը, օրինակ՝ կյետին (գետին) – կյետըրտանք, տանիս – տանըստանք, գյտոմէշ – գյտոմըշտանք, քյեռի – քյեռըստանք (Վանի բրբ.), կյետին (գետին) – կյետընտանք, կըտոր – կըտորտանք, տընիս (տանիք) – տընըստանք (Խոյ – Մրղ. բրբ.): Փաստորեն, վերջին դեպքում *ս-տ-ան-ք* բաղադրությունից բացակայում է *ս* բաղադրիչը:

Բայագետի բարբառի պես *տըրդէրք* հոգնակիի ձև ունի միայն Արարատյան բարբառը: Այս բարբառի Լոռու խոսվածքում Մ. Ասատրյանը արձանագրել է

գուզահեռ ձևեր՝ տղղէք և տղղէք²¹: Մերծավոր մյուս բարբառներում տղա բառի հոգնակին կազմվում է այնպես, ինչպես *ա* ձայնավորով ավարտվող այլ բառերինը, այսպես՝ տղէք (Վանի բրբ.), տղղէք (Մշո բրբ.), տղղէկ (Ալաշկ. խոսվ.): Խոյ – Մարաղայի բարբառում ձայնավորով ավարտվող բազմավանկ բառերի հոգնակին ձևավորվում է *ներ* մասնիկով, ուստի այստեղ տղղա բառի հոգնակին է տղղներ:

Ըստ Գ. Աճառյանի՝ «*եր* և *ք* մասնիկների զումարն է *երք*, որ գտնում ենք Երևանի բարբառում. օր. տղերք, կողերք, տակերք, աղջկերք, լնղերք»²²: Մեր կարծիքով, եթե վերջին չորս ձևերում իսկապես առկա է *եր* և *ք* մասնիկների զումար, ապա տղերք ձևը ըստ երևույթին առաջացել է տղերք օրինակից՝ հոգնակից՝ բերված բառերի համաբանական ազդեցությամբ: Այստեղից էլ տղղէք ձևը ի հայտ է եկել Բայազետի բարբառում:

Իկ հոգնակերտը (կամ նրա հնչյունափոխված տարբերակը) բարբառներում նս միայն մարդ բառի հոգնակին է ձևավորում. այսպես՝ մանթիք (Բայազ. բրբ.), մարթիք (Մշո բրբ.), մառտիկ (Ալաշկ. խոսվ.): Արարատյան և Բայազետի բարբառները ունեն նաև *-եր* հոգնակերտով ձևեր՝ մառթեր (Ար.), մանթեր (Բայազ.): Խոյ – Մարաղայի բարբառում մարդ բառի հոգնակիի ձևն է մառներ, իսկ Լոռու խոսվածքում բառիս հոգնակին կազմվում է կրկնակի հոգնակերտներով՝ մառթըկէք: Հասկանալի է, որ մարդ բառի՝ *-իկ* մասնիկով հոգնակին ավելի հին է, իսկ *-եր* հոգնակերտով ձևը առաջացել է հետագայում՝ որոշ խոսվածքներում զուգորդվելով հին ձևին, այլ խոսվածքներում՝ դուրս մղելով նրան, իսկ խոսվածքների մի մասում էլ մարդ բառը պահպանել է հոգնակիի նախնական միակ ձևը *իկ* մասնիկով:

Բայազետի բարբառին մերծավոր բարբառներում *կին* բառի դիմաց ունենք *կնիկ* ձևը, որի հոգնակին, որպես կանոն, ձևավորվում է *տիք(դիք)* կամ *ներ* մասնիկով. այսպես՝ կընիգ – կընգըդիք (Մշո բրբ.), կընիգ – կընգըտիկ (Ալշ. խոսվ.), կընիկ – կընգըներ, կընիյներ կամ կընթըներ (Խոյ–Մղ. բրբ.), կընիկ – կընգըտիք՝ (Դիադինի բրբ.): Առանձնանում է Վանի բարբառը, որտեղ չնայած *կին* բառի դիմաց ունենք նաև *կնիկ* ձևը²³, բայց հոգնակին կազմվում է *կին* հիմքով և *-հյտեր* մասնիկով, որից առաջ արմատի *ն* հնչյունի անկում է տեղի ունենում՝ *կիհյտեր* կամ *կըհյտեր*²⁴: Փաստորեն, միայն Արարատյան և Բայազետի բարբառներում է²⁵, որ *կընիկ* ձևի սովորական հոգնակիին զուգահեռ (համապատասխանաբար՝ *կընիկներ* և *կընգըներ*) գործառում է նաև *կընանիք* հոգնակին: Ակնհայտ է, որ այս ձևը առաջացել է հիփոհայերեմյան *կանանի* (կան – անի) հավաքական հոգնակիից՝ *ք* մասնիկի հավելումով և *ա* ձայնավորի հնչյունափոխությամբ: Բայազետի բարբառում էլ *կընանիք* ձևը ավելի շատ արտահայտում է հավաքականության իմաստ՝ ի տարբերություն *կընգըներ* ձևի. հմտ. «Կընանիք մըկա շըվար են խաքնում» և «Ըտոնց կընգըները հիրանց մանթերին յե՞փ են լըսում»:

Դիտարկվող բարբառների մի մասում ուսումնասիրողները արձանագրում են *անք*, *ենք*, *ոնք* հավաքական հոգնակերտների առկայությունը, մյուս բարբառների դեպքում այդ մասնիկներով բերվում են հատուկեմտ օրինակներ: Այսպես Մ. Ասատրյանը, փաստելով, որ Ուրմիայի (Խոյի) բարբառում հիշյալ մասնիկները կազմում են անեզական բառեր, բերում է օրինակներ և բացատ-

րում, որ *ենք* մասնիկով անեզական գոյականներ են կազմվում անծերի հատուկ անուններից (Սամըկոնենք, Ասադուրենք), *անք* մասնիկով՝ անծերի հասարակ անուններից (խերանք, քյոնանք), *օնք* մասնիկով՝ դերանունների սեռական հոլովածներից²⁶: Մշո բարբառում իբրև հավաքական իմաստի արտահայտիչներ արժանագրվում են *անք* և *ենք* մասնիկները՝ աներանք, կիսրանք, Ավիգենք, Գուշօենք²⁷: Մինչդեռ այս բարբառի Վլաշկերտի խոսվածքում փաստվում է հավաքական հոգնակերտների բացակայությունը²⁸: Մյուս բարբառներից ունենք սակավ օրինակներ. այսպես՝ խօքը՛րրանք՛, մօքը՛րրանք՛ (Դիադինի բրբ.), խընամօնք, ախպերնօնք, իմօնք, ծ՛րօնք (Ար. բրբ.), ճոճանք (Վանի բրբ.):

Անք հավաքական հոգնակերտը վկայված է հինհայերենյան շրջանում (նուանք, երագագանք) և չի նույնանում *ան* (իշան, ծիան) հոգնակերտի հետ²⁹: *Ենք* մասնիկը, որ գերդաստան անվանող անենագործուն հոգնակերտն է, առաջացել է հին *եան* մասնիկից՝ հնչյունափոխությամբ և *ք* – ի հավելումով: Նկատենք, որ նույն այդ *եան* մասնիկից է ծագում հայկական ազգանվան – *յան* բաղադրիչը: Ինչ վերաբերում է *ոնք* հոգնակերտին, ապա Բայազետի բարբառի փաստերը ևս մեկ անգամ հավաստում են, որ այս մասնիկը ձևավորվել է հինհայերենյան *ո* վերջադրական հոլովման հիմքի վրա: Ստացական դերանունների հոգնակի սեռականի *ոց* հնչյունախումբը ժամանակի ընթացքում դարձել է *ոնց*, որի ազդեցությամբ էլ առաջացել է հոգնակի ուղղականի *ոնք* վերջավորությունը. այսպես՝ իմ – իմոյ – իմոց > իմոնց, ապա և՛ իմոնք: Կարծում ենք՝ *խնամի* և *քեռի* բառերը ևս, չնայած ենթարկվում են *ու* հոլովման, *ոնք* հավաքական հոգնակերտ ստանում են այն պատճառով, որ նախկինում ունեցել են *ո* հոլովիչ: Այդ նույն պատճառով *ոնք* հոգնակերտ ունեն գերդաստանի այն անունները, որոնց եզակիները (ծնով եզակի, իմաստով՝ հոգնակի) ունեն *ու* մասնիկ՝ Գարգըռցոնք – Գարգըռցու, Կաղվալոնք – Կաղվալու, Չիչոնք – Չիչու, Մուխսոնք – Մուխսու, Վանեցոնք – Վանեցու և այլն:

Ասվածը թույլ է տալիս անելու հետևյալ եզրակացությունները.

1) Բայազետի բարբառում, որպես կանոն՝ նաև այլ բարբառներում, բառերի՝ այս կամ այն հոգնակերտ ստանալը պայմանավորված է ա) վանկերի քանակով, բ) բառավերջի ձայնավորի որակով, գ) բառերի իմաստային առանձնահատկությամբ, դ) բառերի հոլովական առանձնահատկությամբ, ե) պատմական ավանդությամբ, զ) այլ բարբառների ազդեցությամբ:

2) Բայազետի բարբառում գործառող բոլոր հոգնակերտներն էլ գալիս են լեզվի զարգացման նախորդ փուլերից, առավելաբար՝ հինհայերենյան շրջանից:

ՇԱՆՈՔԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

¹ Գ՛երան, ք՛երան, գ՛ուբան, իսան բառերի հոգնակի ձևերում բառավերջի *ան* հնչյունախումբը հոգնակերտից առաջ ընկնում է. գ՛երներ, ք՛երներ, գ՛ուքներ, իսներ:

² Բ. Մ. Մկրտչյան, Կարևո բարբառը, Եր., 1953, էջ 44:

³ Մ. Բ. Մուրադյան, Շատախի բարբառը, Եր., 1962, էջ 87:

⁴ Տեղ բառի տեղեր հոգնակին բարբառունս ստացել է «անկողին» իմաստը:

- ⁶ Մ. Մ. Սաղաթյան, Ալաշկերտի խոսվածքը, Եր., 1985, էջ 71:
- ⁷ Ա. Ա. Արրահամյան, Գրաբարի ձեռնարկ, Եր., 1976, էջ 20:
- ⁸ Ա. Ա. Արրահամյան, նույն տեղում:
- ⁹ Դր. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 3, Եր., 1957, էջ 778:
- ¹⁰ Գ. Ջահուկյան, Հայ բարբառագիտության ներածություն, էջ 82:
- ¹¹ Դր. Աճառյան, նշվ. աշխ., էջ 712, 805:
- ¹² Դ. Աճառյան, Քննություն Վանի բարբառի, Եր., 1952, էջ 113:
- ¹³ Մ. Գ. Բաղդասարյան-Թափալցյան, Մշո բարբառը, Եր., 1958, էջ 77:
- ¹⁴ Դ. Աճառյան, Քննություն Վանի բարբառի, Եր., 1952, էջ 112:
- ¹⁵ Դ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 3, էջ 735:
- ¹⁶ Մ. Ե. Սաստրյան, Ուրմիայի (Խոյի) բարբառը, Եր., 1962, էջ 74:
- ¹⁷ Մ. Գ. Մուրադյան, Շատախի բարբառը, Եր., 1962, էջ 87:
- ¹⁸ Այս ձևը ուղղակիորեն առնչվում է դեռևս հին հայերենում վկայված քուեր սեռականին:
- ¹⁹ Մ. Սաստրյան, Լոռու խոսվածքը, Եր., 1968, էջ 92:
- ²⁰ Տիրք հոգնակերտը զործածական է Բայազետի բարբառի միայն Նորատուսի խոսվածքում:
- ²¹ Դ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 3, էջ 712:
- ²² Մ. Սաստրյան, Լոռու խոսվածքը, էջ 91:
- ²³ Դ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 714:
- ²⁴ Դր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 2, էջ 590:
- ²⁵ Այդպես է նաև կին բառով կազմված բարդություններում՝ տանդղկին – տանդղկըչիտեր:
- ²⁶ Նկատի ունենք մեր ուսումնասիրության ոլորտում եղող բարբառների խումբը միայն:
- ²⁷ Մ. Ե. Սաստրյան, Ուրմիայի (Խոյի) բարբառը, Եր., 1962, էջ 74:
- ²⁸ Մ. Գ. Բաղդասարյան-Թափալցյան, Մշո բարբառը, Եր., 1958, էջ 79:
- ²⁹ Զ. Մ. Սաղաթյան, Ալաշկերտի խոսվածքը, Եր., 1985, էջ 73:
- ³⁰ Տես Գ. Ջահուկյան, Հին հայերենի հոլովման սխառնը և նրա ծագումը, Եր., 1959, էջ 86:

В. Л. Катвалян

ОБРАЗОВАНИЕ МНОЖЕСТВЕННОГО ЧИСЛА ИМЕН СУЩЕСТВИТЕЛЬНЫХ В БАЯЗЕТСКОМ ДИАЛЕКТЕ

(в сравнении с историко-географически близкими диалектами)

Анализ образования множественного числа имен существительных Баязетского диалекта производится в сравнении с близкими диалектами: Арартским, Ванским, Мушским, Хой-Марагским, Диадинским.

Все ныне функционирующие показатели множественного числа (եր, ներ, ք, վանք, րանք, տանք/տիրք, անք, սևանք, էրք) восходят к предыдущим этапам развития языка, преимущественно древнеармянскому периоду.

Распределение показателей множественного числа обусловлено количеством слов, особенностями семантики слов и склонения, историческими традициями, влиянием других диалектов.

V. L. Katvalyan

**THE FORMATION OF THE PLURAL FORMS OF THE NOUNS
IN THE DIALECT OF BAYAZET**

(compared with the dialects historically and
geographically akin and near to it)

The study of the plural forms of the nouns in the dialect of Bayazet is made through comparing it with the dialects that are historically and geographically akin and near to it such as the dialects of Ararat, Van, Mush, Khoy-Maragha, and Diadin. All the present plural forming endings /եր, ներ, ք, վանք, ըանք, տանք/տիք, անք, ստանք, էք/ trace back to the former periods of the language development history, mainly to the Old Armenian period. In the dialect of Bayazet the choice of the plural forming ending depends on the number of syllables, the type of the vowel at the end of the word, the semantic and declination features of the word, historical traditions, and the influence of the other dialects.